

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գնահատականը ՀՀ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ

Նախագծի մշակման ժամանակագրությունը

1. 2013 թ. սեպտեմբերի 4-ի ՀՀ Նախագահի թիվ 207-Ն հրամանագրով ձևավորվեց Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, որին հանձնարարվեց մշակել ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ և Սահմանադրական բարեփոխումների նախագիծ: Համաձայն հրամանագրի՝ Սահմանադրական փոփոխությունների գործընթացը մեկնարկել է ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից:
2. 2014 թ. հոկտեմբերի 14-ին Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հաստատեց Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը¹, որը հոկտեմբերի 15-ին հրապարակվեց և ներկայացվեց ՀՀ նախագահին: Հայեցակարգի նախագծի վերաբերյալ իր Կարծիքը² ներկայացրեց նաև Վենետիկի հանձնաժողովը:
3. 2015 թ. հուլիս 15-ին հրապարակվեց մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված նախագծի 1-7-րդ, 10 գլուխների նախագիծը³, օգոստոսի 4-ին՝ 8-16 գլուխների նախագիծը⁴, միաժամանակ հրապարակվեց 1-7-րդ գլուխների փոփոխված նախագիծը: 2015 թ. հուլիսի 17-ին Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ իր կարծիքը⁵ հրապարակեց Վենետիկի հանձնաժողովը:
4. 2015 թ. օգոստոսի 20-ին Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից հաստատվեց Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը⁶ և ներկայացվեց ՀՀ նախագահին: 2015 թ. սեպտեմբերի 10-ին Վենետիկի հանձնաժողովը հրապարակեց Սահմանադրության նախագծի 1-7-րդ և 10-րդ վերանայված գլուխների իսկ սեպտեմբերի 11-ին հրապարակեց 8-16-րդ գլուխների վերաբերյալ կարծիքները⁷:
5. 2015 թ. օգոստոսի 21-ին Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, հիմնավորումներով ներկայացվեց ՀՀ Ազգային Ժողով:
6. 2015 սեպտեմբեր ամսին մեկնարկեցին ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի քննարկումները Ազգային Ժողովում, որը տևեց ընդամենը 4 օր (սեպտեմբերի 15-18):

¹ http://www.moj.am/storage/uploads/Sahmanadrakan_barepokhumner.14.10_.pdf

² [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)027-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)027-e)

³ <http://www.moj.am/article/1326>

⁴ <http://www.moj.am/article/1353>

⁵ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)015-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)015-e)

⁶ <http://www.moj.am/storage/uploads/Nakhagits.fn.docx>

⁷ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)015rev-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)015rev-e)

⁸ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)019-e)

7. Այսպիսով, Սահմանադրական փոփոխությունների նախագծի մշակումը Հանձնաժողովի կողմից իրականացվեց երկու տարվա ընթացքում, սակայն հանրությունը Սահմանադրության փոփոխությունների նախագծին ծանոթանալու համար ունեցավ ոչ ավել քան 2 ամիս: Ավելին՝ Հայեցակարգը ներկայացնելուց հետո Սահմանադրական փոփոխությունների նախագծի շուրջ հանրային քննարկումներ չիրականացվեցին: Նշենք, որ 2015 թ. հունիս ամսին փոփոխություններ և լրացումներ կատարվեցին «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում, ըստ երևույթին նախապատրաստվելով գալիք հանրաքվեին:

Սահմանադրության փոփոխության նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը

8. Սահմանադրական փոփոխությունների իրականացման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը հանդիսանում է կարևոր և քննարկված հարցերից մեկը: ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով որպես հրատապ և սահմանադրական լուծումների մակարդակում որպես սկզբունքային նոր մոտեցումներ սահմանված են թվով 11 հիմնախնդիրներ, այդ թվում.
- իշխանակենտրոն սահմանադրական լուծումների համակարգից մարդակենտրոն համակարգի հետևողական անցում կատարումը,
 - սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի հետևողական իրացման և հստակ ծրագրանպատակային քաղաքականություն իրականացնելու համար հստակ սահմանադրական երաշխիքների ստեղծումը,
 - համակարգային ամբողջականության մեջ առավել հետևողական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքը իրացումը,
 - Սահմանադրությամբ չնախատեսված պետական մարմինների միջոցով պետաիշխանական գործառույթների իրականացման բացառումը,
 - սահմանադրական տարբեր մարմինների լիազորությունների իրական ծավալի և նրանց քաղաքական պատասխանատվության միջև ակնհայտ անհամամասնությունը և այլն:
9. Թեև Սահմանադրության փոփոխությունները կրում են լայնածավալ բնույթ, փոփոխվում են գրեթե բոլոր նորմերը՝ բացառությամբ Սահմանադրությամբ իսկ անփոփոխ հռչակված հողվածները, սակայն առանցքային փոփոխություն է հանդիսանում անցումը կիսանախագահական պետական կառավարման համակարգից դեպի խորհրդարանական պետական կառավարման համակարգ, և դրանով պայմանավորված փոփոխվում են սահմանադրական մարմինների ձևավորման մինչ այժմ գոյություն ունեցող մեխանիզմներն ու սկզբունքները:
10. Տվյալ համատեքստում անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում հերթական նախագահական ընտրությունները պետք է տեղի ունենային 2018 թ. փետրվարին, իսկ Խորհրդարանական



ընտրությունները՝ 2017 թ. մայիսին:

11. Նախագծով սահմանվող կառավարման խորհրդարանական համակարգի անցման արդյունքում ՀՀ Ազգային Ժողովը դառնում է ժողովրդի կողմից ուղղակիորեն ընտրվող միակ համապետական մարմինը:
12. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հիմնավորման⁹ մեջ կառավարման խորհրդարանական համակարգի դեմ ներկայացվող փաստարկների թվում նշվում է կուսակցությունների չկայացվածության հանգամանքը: Միննույն ժամանակ այս հանգամանքի դեմ ներկայացված են հակափաստարկներ, այդ թվում, որ անցումը կառավարման խորհրդարանական համակարգին կարող է բարենպաստ հնարավորություններ ընձեռնել կուսակցություններին՝ գաղափարախոսական և ինստիտուցիոնալ առումներով ուժեղացման համար, դրանով իսկ մեծացնելով հասարակության լայն շերտերի ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում:
13. Այս համատեքստում անհրաժեշտ է գնահատել ՀՀ-ում ներկայումս գործող կուսակցությունների իրական ինստիտուցիոնալ զարգացման հնարավորությունները:
14. ՀՀ ներկայիս գումարման Ազգային Ժողովում մանդատները բաշխված են հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

ՀՀ ԱԺ-ում կուսակցությունների մանդատների քանակը

Խմբակցության անվանում	Խմբակցության ԱԺ անդամների թիվը
ՀՀԿ	70
ԲՀԿ	33
ՕԵԿ	5
ՀՅԴ	5
ՀԱԿ	7
ԺԿ	4

15. Պետք է արձանագրել, որ Ազգային Ժողովում կուսակցությունների ներկայացվածության պատկերը համապատասխանում է նրանց ռեսուրսային ապահովվածության աստիճանին (Տե՛ս Աղյուսակ 2, Աղյուսակ 3, ըստ 2010թ. ԿԸՀ ներկայացված տվյալների¹⁰): Ուսումնասիրելով ներկայացված տվյալները կարող ենք արձանագրել, որ արդեն 17 տարի իշխող ՀՀԿ-ն անհամեմատ զերազանցում է բոլոր մյուս կուսակցություններին թե՛ նյութական, թե՛ դրամական ռեսուրսներով: Ավելին, ՀՀԿ դրամական միջոցները մոտ 3 անգամ ավելի են ԱԺ ներկայացված մյուս բոլոր կուսակցությունների դրամական միջոցների հանրագումարից: Ի դեպ, նկատենք, որ ռեսուրսների տեսակետից ՀՀԿ-ի հետ կարող էր որոշակի մրցակցություն ապահովել ԱԺ ներկայացված երկրորդ քաղաքական ուժը ԲՀԿ-ն:

⁹ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=7672&Reading=0>

¹⁰ <http://www.elections.am/kus2013/>

Աղյուսակ 2

ՀՀ ԱԺ-ում ներկայացված կուսակցությունների սեփականություն հանդիսացող, օգտագործվող անշարժ գույքը

Ըստ 2013 թ. Երևանու ավագանու ընտրությունների համար ԿԸՀ ներկայացրած հայտարարագրերի	Անշարժ գույք											
	Շինություն						Հողատարածք					
	Միանձնյա սեփականություն		Անհատույց օգտագործում		Վարձակալություն		Միանձնյա սեփականություն		Ընդհանուր բաժնային սեփականություն		Վարձակալություն	
Կուսակցություն	քանակ	քառ. մետր	քանակ	քառ. մետր	քանակ	քառ. մետր	քանակ	հեկտար	քանակ	հեկտար	քանակ	հեկտար
ՀՀԿ	33	14408	=	=	9	1051.9	14	0.87949	1	0.05789	1	0.2
ԲՀԿ	=	=	52	6113.5	1	132.3	=	=	=	=	=	=
ՀՅԴ	35	8794.5	=	=	=	=	=	=	=	=	=	=
ՀԱԿ	1	297.04	=	=	=	=	=	=	=	=	=	=
ՕԵԿ	1	765.2	=	=	=	=	=	=	=	=	=	=
ԺԿ	=	=	=	=	=	=	=	=	=	=	=	=

Աղյուսակ 3

ՀՀ ԱԺ-ում ներկայացված կուսակցությունների ֆինանսական կարողությունները

Ըստ 2013 թ. Երևանու ավագանու ընտրությունների համար ԿԸՀ ներկայացրած հայտարարագրերի	Շարժական գույք	Դրամական միջոցներ	Եկամուտներ			
	Միանձնյա սեփականություն		Անդամավճարներ և նվիրատվություն	Վարձակալության վճարներ	Բյուջետային ֆինանսավորում	Այլ եկամուտներ
Կուսակցություն	քանակ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
ՀՀԿ	8	39843822	364539760	13004480	29530400	8035077
ԲՀԿ	=	8933009	14397000	=	17511000	68772
ՀՅԴ	=	2091490	=	=	=	=
ՀԱԿ	=	2162800	5259700	=	=	=
ՕԵԿ	2	1036000	8650000	=	4633400	=
ԺԿ	=	=	25666000	=	4387000	=

16. Այս համատեքստում տեղին է հիշատակել 2015 թ. փետրվարին Բարգավաճ Հայաստան կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ ՀՀ և ՀՀԿ նախագահ Ս. Սարգսյանի հրապարակային սպառնալիքները: ՀՀԿ գործադիր մարմնի նիստի ժամանակ Սերժ Սարգսյանը ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին որակեց որպես չարիք¹¹, տեղեկացրեց, որ վերջինիս ազատել է ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի անդամությունից, ինչպես նաև հայտնեց, որ.

¹¹ http://civilnet.am/2015/02/12/serzh-sargsyan-slams-gagik-tsarukyan/#.VfvOlt_tIHx
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- «2013-2014 թ. ՀՀ ԱԺ գումարած 145 նիստերից Գագիկ Ծառուկյանը մասնակցել է միայն 4-ին: Եթե նա այդ աստիճանի արհամարհում է իր ընտրողներին և Ազգային ժողովի դերը, մենք դրա իրավունքը չունենք. մենք պատասխանատու ենք ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների համար: Մեր պատգամավորները վաղվանից կնախաձեռնեն նման անհեթեթ վիճակին վերջ տալու համար անհրաժեշտ քայլերը:
 - Տարիներ ի վեր շարունակում են օդում կախված մնալ չստուգված լուրերը չմուծված միլիարդավոր դրամ հարկերի, տարեցների կենսաթոշակներից ու երիտասարդների կրթվելու իրավունքից գողացված միլիարդները չնչին, այսպես ասած, «բարեգործության» անվան տակ քողարկելու մասին: Ես հորդորում եմ Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ հանձնարարել համապատասխան մարմիններին մինչև վերջ ու մանրամասն ստուգել այս լուրերի իսկությունը և բաց ներկայացնել բոլորին:
 - Շարունակում են նաև օդում կախված մնալ բազմաթիվ քրեական հանցագործություններ պրոֆեսիոնալ կերպով քողարկելու մեխանիզմ հիմնելու մասին չստուգված լուրերը: Վաղը ես հրավիրելու եմ Անվտանգության խորհրդի նիստ, որտեղ մեր իրավապահների հետ համապատասխան անդրադարձ կլինի, թե ինչպես վարվել նման լուրերի հետ:»
17. Արդյունքում, մոտ մեկ ամիս անց Գագիկ Ծառուկյանը հայտարարեց կուսակցության նախագահի պաշտոնից և քաղաքականությունից հեռանալու մասին: Գ. Ծառուկյանը նաև հայտարարեց, որ այլևս որևէ կապ չունի Բարգավաճ Հայաստան կուսակցության հետ: Կուսակցության նախագահի այս հայտարարությունից հետո ԱԺ ԲՀԿ խմբակցության անդամների մի մասը լքեց խմբակցությունը: Փաստորեն, ԱԺ ԲՀԿ խմբակցությունը մասնատվեց և թուլացավ:
18. Մինչ այդ, 2015 թ. հունվարին Գագիկ Ծառուկյանը նախաձեռնել էր ոչ իշխանական քաղաքական և ոչ քաղաքական ուժերին համախմբել, և այդ նպատակով կազմակերպել համաժողով՝ ոչ իշխանական քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնությունների և շարժումների ներկայացուցիչների մասնակցությամբ, և քննարկել երկրում ստեղծված քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակը:
19. Այսինքն, Մերժ Սարգսյանը օգտագործելով Գ. Ծառուկյանի, որպես ամենախոշոր օլիգարխի խոցելիությունը, կասեցրեց հնարավոր քաղաքական գործընթացները: Ի դեպ, մինչ այժմ պարզ չէ, թե ինչպիսին են Գագիկ Ծառուկյանի Ազգային ժողովի նիստերի բացակայությունների, ենթադրյալ չմուծված հարկերի և «քրեական հանցագործությունները պրոֆեսիոնալ կերպով քողարկելու մեխանիզմ հիմնելու» վերաբերյալ լուրերի հետքերով իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, նաև հայտնի չէ, թե որքանով և ինչքան ժամանակով են այդ հարցադրումները ակտուալ:
20. Այսպիսով, 2015 թ. սկզբին Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից ծանր

հարված հասցվեց մեծությամբ երկրորդ ԱԺ խմբակցությանը և ընդհանրապես Բարգավաճ Հայաստան կուսակցությանը: Արդյունքում, ամրապնդվեցին Հայաստանի հանրապետական կուսակցության գերիշխող դիրքերը քաղաքական դաշտում:

21. Կարևոր է արձանագրել, որ .

- Սահմանադրական փոփոխությունների գործընթացը նախաձեռնվում և իրականացվում է Սերժ Սարգսյանի, որպես ՀՀ նախագահի պաշտոնավարման երկրորդ ժամկետի ավարտից առաջ,
- 2018 թ. փետրվարին նախատեսվող նախագահական ընտրությունների ժամանակ պետք է առաջադրվեր նոր թեկնածու, այդ թվում ՀՀԿ կողմից, որը կարող էր նոր խթան հանդիսանալ քաղաքական գործընթացների և զարգացումների համար: Այսպիսով, կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու դեպքում կասեցվում է Հայաստանի Հանրապետությունում հասարակական և քաղաքական փոփոխությունների կարևոր հնարավորությունը,
- կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու դեպքում ՀՀ քաղաքացիների կողմից ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորվելու է միայն մեկ համապետական մարմին՝ ՀՀ Ազգային Ժողովը, որում ներկայիս կուսակցությունների ռեսուրսների ծայրահեղ անհամաչափության պայմաններում կանխատեսելի է ՀՀԿ անառարկելի մենիշխանությունը, ինչը հանգեցնելու է նաև դատական իշխանության և գործադիր իշխանության հիմնական պաշտոնատար անձանց՝ միայն մեկ քաղաքական ուժի կողմից նշանակմանը:
- նկատենք, որ Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Ազգային Ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 3/5-րդի (60%-ի) կողմից են ընտրվելու Սահմանադրական դատարանի դատավորները, Վճռաբեկ դատարանի 3 դատավորները, Բարձրագույն դատական խորհրդի 5 անդամները, Գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները, Վերահսկիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի նախագահը:
- մինչ այժմ Ս. Սարգսյանի և ՀՀԿ իշխանության օրոք բոլոր համապետական ընտրություններն ընթացել են այնպիսի խախտումներով, որոնք որևէ վստահություն չեն ներշնչում Սահմանադրության փոփոխությունների նպատակով կազմակերպվելիք հանրաքվեի նկատմամբ:

22. Այսպիսով, ձևավորված են բոլոր անհրաժեշտ նախադրյալները ՀՀԿ կողմից ՀՀ-ում փաստացի մենիշխանության ապահովման համար՝ կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու դեպքում, որը հանդիսանում է մեկ կուսակցական համակարգի ներդրում, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ հոդվածներին և հակասահմանադրական է:

Մի շարք մտահոգություններ Սահմանադրության փոփոխության նախագծի հիմնարար դրույթների վերաբերյալ

Ստորև ներկայացվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի մտահոգությունները Սահմանադրության փոփոխությունների նախագծի մի շարք կարևոր դրույթների վերաբերյալ:

Սույն Կարծիքը կազմելիս ուսումնասիրվել են ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունները: Հաշվի են առնվել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջները, նաև մի շարք կառույցների և անձանց կարծիքները Սահմանադրության փոփոխությունների և Սահմանադրության փոփոխությունների նախագծի առանձին դրույթների վերաբերյալ:

Սահմանադրական կարգի հիմունքները բաժնի վերաբերյալ

1. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 5 –րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմերը գերակայություն ունեն օրենքների նկատմամբ: Այս սահմանումը սահմանափակ երաշխիքներ է ապահովում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետության միջազգային պարտավորությունների կատարման համար: Ավելին, նախագծով շրջանառության մեջ է դրվում «սահմանադրական օրենքների» համակարգը: Սակայն Նախագիծը չի սահմանում սահմանադրական օրենքների հանդեպ միջազգային իրավունքի պարտադիր դրույթների գերակայություն ունենալու սկզբունքը: Համապատասխան ոլորտներում (Ընտրական օր, Դատական օր. և այլն) բացի ՀՀ Սահմանադրությանը սահմանադրական օրենքների համապատասխանության պահանջից, անհրաժեշտ էր նաև ամրագրել ՀՀ-ի համար պարտադիր միջազգային իրավունքի դրույթներին սահմանադրական օրենքների համապատասխանության դրույթը, որը չի կարող անտեսվել և կարգավորված չլինել: Ավելին, որևէ երաշխիք չկա, ելնելով Հայաստանի Հանրապետությունում իրավական դաշտի ձևավորման ավանդույթներից, որ սահմանադրական օրենքներով չեն սահմանափակվի մարդու իրավունքներն ու ազատությունները:
2. Գործող Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասն արձանագրում է. «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: Նախագծի 81–րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում ՀՀ մասնակցությամբ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան», որն ակնհայտ

նահանջ է գործող Սահմանադրության վերոնշյալ դրույթով սահմանված պարտադիր պահանջից:

3. Սույն Սահմանադրական կարգի հիմունքները զլիտվ նաև սահմանված է պետության և կրոնական կազմակերպությունների անջատ լինելու սկզբունքը (16-րդ հոդված): Մինևույն ժամանակ Նախագծի 17-րդ հոդվածով սահմանված է Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Այստեղ պահպանվել է գործող Սահմանադրության շարադրանքը, սակայն ի տարբերություն գործող Սահմանադրության, Նախագծով հստակ նշված չէ եկեղեցու պետությունից անջատ լինելու մասին: Թեև դա բխում է 16-րդ հոդվածի 2-րդ մասին դրույթներից, սակայն հստակ կարգավորման բացակայությունը կարող է տարաբնույթ և անորոշ մեկնաբանությունների տեղիք տալ: Քանզի, նույնիսկ գործող Սահմանադրության կարգավորումների պայմաններում եկեղեցին իր հատուկ և մենաշնորհային դերն ունի պետական համակարգի կարևորագույն ինստիտուտներում՝ բանակ, կրթական և այլ ոլորտներում, որը հակասում է մարդու խղճի և կրոնի ազատության բուն բովանդակությանը: Նախագծով ներկայացված մոտեցմամբ Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցուն տրվում է մենիշխանություն հոգևոր ոլորտում, որը հակասում է աշխարհիկ պետության որպես մարդկային քաղաքակրթության կարևոր սկզբունքներից մեկին:
4. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը թեև սահմանում է որ, ՀՀ Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ(հոդված 5), սակայն չի սահմանում անմիջականորեն գործելու սկզբունքը որն էականորեն նվազեցնում է Սահմանադրության որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթի նշանակությունը և դերը հասարակական հարաբերություններում::

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունների բաժնի վերաբերյալ

5. Անհրաժեշտ է արձանագրել, որ չնայած ՀՀ վերցրած պարտավորություններին, մարդու իրավունքների և ազատությունների վիճակը բոլոր բնագավառներում, բացառությամբ մեկ կամ երկու ոլորտների, որն է զարգացում չի արձանագրվել, ավելին ակնհայտ հետընթացներ են արձանագրվել: Նախագծով որոշ իրավունքների առաջարկվող կարգավորումները սահմանված են չափազանց մանրամասն և կոնկրետ¹², որը կարող է սահմանափակել այդ իրավունքի կամ հարաբերությունների հետագա իրականացումը:
6. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով,

¹² [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)015rev-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)015rev-e)

Եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Մույն դրույթի առանցքային հասկացություններից է հանդիսանում «ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը: Նախագծով իրավունքների սահմանափակումները սահմանող հոդվածներում բացակայում է «ժողովրդավարական հասարակությունում» անհրաժեշտության պայմանը¹³:

7. Նախագծի 77 –րդ հոդվածով սահմանվում է հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը: Այս հոդվածի շրջանակներում սահմանված է նաև ազգային, ռասայական և կրոնական ատելություն բորբոքելու նպատակով հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործման արգելքը: Նախագծի 29-րդ հոդվածով սահմանված է որևէ հիմքով խտրականության արգելքը: Միայն սահմանափակ հիմքերով ատելություն բորբոքելու արգելքը, հակասում է խտրականության համընդհանուր արգելքի սզբունքին, այն դեպքում, երբ ատելություն քարոզելը հանդիսանում է խտրականություն հրահրելու միջոց և հանգեցնում է խտրական վերաբերմունքի: Նման կարգավորումները բացասական կանդրադառնան խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների (կյանքի, առողջության, սեփականության և այլ իրավունքների) պաշտպանության վրա:
8. Անձի իրավունքների սահմանափակման տեսանկյունից մտահոգիչ է խոցելի խմբերի հանդեպ բարելավման քաղաքականության բացակայությունը: Մասնավորապես Նախագծով պահպանվել է անձի անգործունակ ճանաչելու ինստիտուտը, ինչը հակասում է անձի՝ օրենքի առջև հավասարության սկզբունքին և ՀՀ կողմից վավերացված Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին: Անձի անգործունակ ճանաչելու ինստիտուտը չի կարող ընդունելի համարվել ժողովրդավարական, մարդու արժանապատվության, խտրականության համընդհանուր արգելքի սկզբունքներով դեկլարվող իրավական պետությունում: Մինևույն ժամանակ այս ինստիտուտը պետք է փոխարինվի անհրաժեշտության և բավարար փաստական և իրավական հիմքերի առկայության դեպքում՝ կոնկրետ իրավունքի սահմանափակման մեխանիզմով¹⁴:
9. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոքի չի կարելի անձնական ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. ... երբ անձն ունի հոգեկան խանգարում, թմրամոլ կամ զինեմոլ է»: Անհրաժեշտ է նշել, որ ինքնին անձի հոգեկան խանգարում ունենալը, թմրամիջոցի գործածումը և զինելությամբ տառապելը որևէ դեպքում չի կարող հիմք հանդիսանալ նրան ազատությունից զրկելու համար: Նման մոտեցումը հանդիսանում է ոչ միայն խտրական, այլև հակասում է մարդու իրավունքի բուն էությանը, և

¹³ Տե՛ս նաև [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015-e)

¹⁴ Տե՛ս ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը ՀՀ-ում չափահաս անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտի վերաբերյալ

<http://hcav.am/events/04-06-2015-5/>

հակասում է Նախագծի 29-րդ հոդվածին: Տվյալ դեպքում անձի ազատության սահմանափակման հիմք կարող է հանդիսանալ միայն իր կամ այլոց անվտանգությանը և առողջությանը այնպիսի վտանգ սպառնալը, որը կարող է վերացվել միայն անձի ժամանակավոր ազատազրկմամբ, որն անհապաղ պետք է դադարեցվի սպառնալիքի հիմքերի վերանալու պահից:

10. Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև լայն արձագանք ստացած և քննարկումների առարկա դարձած ամուսնանալու ազատությունը կարգավորող 34-րդ հոդվածին: Սույն հոդվածով սահմանվում է ամուսնական տարբի հասած կնոջ և տղամարդու՝ իրենց կամքի ազատ արտահայտությամբ միմյանց հետ ամուսնանալու իրավունքը: Իսկ որպես այս իրավունքի սահմանափակման հնարավորություն է սահմանված հանրային շահի առկայությունը: Անդրադառնալով ամուսնանալու ազատության նմանատիպ սահմանմանը, հիմնավոր ենք համարում Վենետիկի հանձնաժողովի մտահոգությունները Նախագծով սահմանված կարգավորումների: Մինևույն ժամանակ անդրադառնալով նույնասեռ միությունների ճանաչմանը, հարկ ենք համարում նշել, որ նման միությունների օրենքով ճանաչման մերժումը կարող է հանգեցնել նաև Նախագծով ճանաչված անձանց սեփականության և մի շարք այլ իրավունքների խախտմանը:
11. Ինչ վերաբերվում է ամուսնության իրավունքի՝ հանրային շահի պաշտպանության նպատակով սահմանափակված լինելու հնարավորությանը, ապա սույն դրույթը անորոշ է: Նմանապես, պարզաբանման ենթակա է տեղեկատվություն ստանալու իրավունքի (50-րդ հոդված), գործադուլի իրավունքի (56-րդ հոդված), ձեռնարկատիրական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման (57-րդ հոդված)՝ հանրային շահի պաշտպանության նպատակով սահմանափակված լինելու հնարավորության սահմանումը: Ավելին, Նախագծում օգտագործվում են երեք համանման արտահայտություններ՝ հանրային շահ, հանրության շահ (58-րդ հոդվածի 3-րդ մաս) և հանրության գերակա շահ (58-րդ հոդվածի 5-րդ մաս):

Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների ոլորտ

12. Կարևորելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների¹⁵ ոլորտներում պետության կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ՀՀ Ազգային Ժողով գեկույց ներկայացնելու Կառավարության պարտավորության սահմանումը՝ պարզ չէ, թե ինչու նման պարտավորություն չի սահմանվել նաև Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ: Ինչպես նաև չի սահմանվել տվյալ ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության զարգացում ապահովելու անհրաժեշտությունը¹⁶:
13. Մինևույն ժամանակ, 3-րդ գլխի դրույթները սահմանված են չափազանց անորոշ. պարզ չէ, թե «Օրենքը սահմանում է» արտահայտությունը արդյոք նշանակում է ՀՀ Սահմանադրությամբ տվյալ իրավունքի ճանաչում, թե ոչ, և ինչ նվազագույն չափանիշներ և մեկնարկային

¹⁵ Այստեղ նախագծում նույնիսկ չի օգտագործվել «իրավունք» բառը:

¹⁶ <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CESCR.aspx>

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hca@hca.am

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hca@hca.am

բովանդակությունն պետք է ունենա տվյալ ոլորտներում ՀՀ օրենսդրությունը: Նման ձևակերպումներն ավելի շուտ ենթադրում է խուսափել տվյալ իրավունքների ճանաչումից: Գործող Սահմանադրությունը հստակ սահմանում է սոցալական ապահովության (հոդված 37), անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու (հոդված 38) և մի շարք այլ իրավունքներ: Նկատենք, որ այս իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանափակվել է նաև Սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքը, որն ակնհայտ հետընթաց է գործող Սահմանադրության կարգավորումներից:

Պետական մարմիններ

14. Սահմանադրության նախագծի 158-րդ հոդվածով սահմանված է, որ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմինները, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները պետք է սահմանվեն օրենքով: Սահմանադրության փոփոխությունների նախագծով կարգավորվում է Կառավարության հաշվետվողականության համակարգը: Սակայն պարզ չէ, թե որքանով և ինչ կերպ են հաշվետու լինելու ՀՀ Ազգային Ժողովի առջև Վարչապետին ենթակա պետական կառավարման մարմինները: Այսինքն առկա է Կառավարությանն առընթեր և ներկայացուցչական մարմնի վերահսկողությունից գրեթե դուրս մարմինների ստեղծման վտանգը:
15. Այս համատեքստում պարզ չէ նաև, թե ինչ կարգավիճակ են ունենալու քննչական մարմինները: Այժմ գործում են քննչական լիազորություններով օժտված Քննչական կոմիտեն, Հատուկ քննչական ծառայությունը, Ազգային անվտանգության ծառայության և ֆինանսների նախարարության քննչական մարմինները, որոնցից առաջին երկուսի ղեկավարները նշանակվում են ՀՀ նախագահի կողմից: Պարզ չէ, թե ինչ կարգավիճակ են ունենալու քննչական մարմինները, ինչպես են կազմավորվելու, վերահսկողության ինչ լիազորություններ է ունենալու Ազգային Ժողովը քննչական մարմինների գործունեության վերահսկողությունն ապահովելու ուղղությամբ (բացակայում է տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջը):
16. Սահմանադրության փոփոխությունների նախագծով սահմանված է ՀՀ գլխավոր դատախազի նշանակման կարգը, սակայն դատախազության գործունեության հիմնական ուղղությունները թողնվել են անփոփոխ: Մինևույն ժամանակ, Սահմանադրության փոփոխությունների նախագծում սահմանված չեն դատախազության՝ ՀՀ Ազգային ժողովին տարեկան հաղորդումներ ներկայացնելու պարտավորությունը, թեև Սահմանադրությամբ ամրագրված այլ մարմինների դեպքում այդ պարտավորությունն ամրագրված է:
17. Խիստ մտահոգիչ է Սահմանադրության փոփոխությունների նախագծի 201-րդ հոդվածի 2-րդ հոդվածով նախատեսված դրույթը, որի համաձայն ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածների

փոփոխություններն ընդունվում են Ազգային ժողովի կողմից: Թեև նախագծի հեղինակները նշվում են, թե առանցքային նշանակություն ունեցող դրույթների փոփոխությունը նախատեսված է իրականացնել հանրաքվեի միջոցով, սակայն հարկ է նշել, որ պարզ չէ, թե ինչ սկզբունքով են որոշվել **առանցքային նշանակություն ունեցող հոդվածները**: Խորհրդարանական կառավարման համակարգի ժողովրդավարական բովանդակության ապահովման կարևորագույն նշանակություն ունեցող այնպիսի դրույթներ, որոնք վերաբերվում են պատգամավորական մանդատի լիազորություններին, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը, Կառավարության հաշվետվողականությանը, պետական բյուջեի նկատմամբ վերահսկողության իրականացմանը և այլ հիմնարար դրույթներ, ենթակա են Ազգային ժողովի կողմից փոփոխությանը:

18. Մինևույն ժամանակ, սահմանադրական անկախ մարմիններից միայն Մարդու իրավունքների պաշտպանի վերաբերյալ դրույթները կարող են փոփոխվել հանրաքվեի միջոցով, իսկ մյուս պետական մարմինների գործունեության հիմքերի վերաբերյալ կարգավորումները կարող են փոփոխության ենթարկվել նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից (Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով, Վերահսկիչ պալատ, Դատախազություն): Սահմանադրական նշված դրույթները Ազգային ժողովի կողմից փոփոխելու լիազորությունը կհանգեցնի խորհրդարանական կայուն մեծամասնություն հանդիսացող կառավարող կուսակցության կողմից մարդու իրավունքների և ազատությունների իրականացման համար պատասխանատու պետական մարմինների պարտականությունների վերացմանը, որով մարդու իրավունքների և ազատությունների մասին դրույթները կստանան հռչակագրային նշանակություն:
19. Ամփոփելով, հարկ է նշել, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կիսում է նաև այլ մասնագետների և կառույցների մտահոգությունները սեփականության իրավունքի, հավաքների ազատության և այլ իրավունքների չափազանց լայն սահմանափակումների սահմանման հնարավորության վերաբերյալ: Ինչպես նաև, մտահոգիչ է այն հանգամանքը, որ Սահմանադրության փոփոխությունների փաթեթը մշակելիս հաշվի չեն առնվել նույնիսկ իրենց իսկ մշակած Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի կարևոր դրույթներ, մասնավորապես երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատաքնությունների իրականացման մեխանիզմի հնարավորությունը:



Ամփոփում

Ելնելով վերոշարադրյալից, արձանագրում ենք, որ.

Սահմանադրական փոփոխությունների գործընթացը իրականացվում է հապշտապ, շրջանառության մեջ դրված Սահմանադրական փոփոխությունների նախագծի շուրջ հանրային քննարկումները տևել են ավելի քիչ քան երկու ամիս, իսկ Ազգային Ժողովում նախագծի շուրջ բուն քննարկումները՝ ընդամենը չորս օր: Սահմանադրության նկատմամբ նման մոտեցումը անընդունելի և անթույլատրելի է:

Սահմանադրության փոփոխությունների գործընթացը, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագծով առաջարկվող կառավարման խորհրդարանական համակարգին անցնելուն ուղղված լուծումները ոչ միայն պահանջված չեն հանրության կողմից, այլև ուղղված են միայն մեկ կուսակցության պահանջների բավարարմանը, ուստի Սահմանադրական փոփոխությունների գործընթացը ժամանակավրեպ է:

Սահմանադրության փոփոխությունների նախագծով ոչ միայն լուծումներ չեն տրվում մարդու իրավունքների ոլորտում մի շարք խնդրահարույց հարցերին, այլև պարունակում են լրջագույն սպառնալիքներ: